ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

**ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶՊԵՏ**

# ՈՐՈՇՈՒՄ

N 310 Ա

ք.Արտաշատ

„09" հոկտեմբերի 2024թ.

## <<ՀՀ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՐԲԱԹԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ>> ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ՍՈՒՍԱՆՆԱ ԻՍՐԱՅԵԼՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՏՈՒՅԺ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 220-րդ հոդվածով, 223-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, <<Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին>> օրենքի 14-րդ հոդվածի 2-րդ մասի բ) ենթակետով, հիմք ընդունելով <<ՀՀ Արարատի մարզի Արբաթի միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ-ի տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար Սուսաննա Իսրայելյանի 23.09.2024 թ. ներկայացրած բացատրագիրը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2022 թվականի դեկտեմբերի 7-ի՝ <<Հանրակրթական ուսումնական հաստատությունների՝ պետական բյուջեի միջոցներից ֆինանսավորման գործակիցներն ու նորմատիվները հաստատելու մասին>> N 79-Ն հրամանի հավելվածի 3-րդ կետի 5-րդ ենթակետով սահմանված պահանջի խախտման՝ օրենսդրությամբ սահմանված ժամկետում անհրաժեշտ տվյալները Կրթության կառավարման տեղեկատվական համակարգ չմուտքագրելու համար, <<ՀՀ Արարատի մարզի Արբաթի միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ-ի տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար Սուսաննա Իսրայելյանի նկատմամբ կիրառել <<նկատողություն>> կարգապահական տույժ:

Восстановимая подпись

X

ՍԵԴՐԱԿ ԹԵՎՈՆՅԱՆ

Подписано: TEVONYAN SEDRAK 2602900826

ՄԱՐԶՊԵՏ՝ Ս. ԹԵՎՈՆՅԱՆ